



THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 29

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ, 28 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՍ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ
ԼՈՒՐԵՐ

Օտտային առնուած հեռագիր մը կը լսէ թէ Ռուսիա Սպանիոյ կողմէ պիտի բռնէ՝ եթէ Մեծն Բրիտանիա Միացեալ Նահանգաց զաշնակցի Մանիլայի կռուէն երկու օր վերջ Փորթո Րիքոյի մէջ հրատարակուած սպանիէրէն լրագիր մը կ'ըսէր թէ՝ մի քանի շաբաթէն սպանիական բանակներն Ռաշինիթըն պիտի հասնին ու Նախագահ Մաք Քինլին գերի պիտի բռնեն։

Ամայս 19ին Գերմանական կէջը մարտանաւը Հավանայ եկաւ։ Սպանիացիք հեռագրած են թէ Գերմանական նաւատորմի շարքէն Վալիա կերպով, մինչ Հավանայի քաղաքը շրջուած է 21 թընդափով։

Ապանիական Քէյփ Վէրտի նաւատորմի Սանթիակո տի Քիւպա հասաւ տունց ո՛ւ է արկածի։ Ամերիկեան նաւատորմի յուսիսարեւելան Սէրվէրայի այս յաջող ճամբորդութիւնն առնուած Սպանիոյ թագուհին շնորհակալութեան հեռագիր մը լրակցեց նաւատորմի հրամանատարին։

Հայթիէն կը հեռագրեն թէ Հորանիական նաւատորմի Քուրասօ կղզին հասած ատեն իւր պաշարը գրեթէ լրացած է եղեր, անանկ որ նաւատորմի շատեր օրերէ ի վեր խաշած գետնախնձոր ուտելով միայն ապրած են։ Յիշեալ կղզիէն գրահանուած 300 թօնօ գէջ անուխ և 100 թօնօ պաշար ուսած են։

Սպանիացիք լուր հանցին շաբթուս մէջ թէ ճովակալ Տուվի սպանուած է Մանիլայի առջև։ Այս լուր հերքուեցաւ շուտ մը, զի Մատրիտի մէջ շինուած սպանիական ուսումնական շարժում մէջ Մանիլայ զօրք, պաշար ու ռազմամթերք տանելու։

Պարսկերէն հետզհետէ պիտի հետևին այլ և այլ փոխադրանքներ։

Քէյփ Վէրտի նաւատորմի Քիւպա հասնելը սպանիական արծեթեղթերու գինն մէկ և աստիճան բարձրացուց պորտայի մէջ։

Կըսուի թէ Միացեալ Նահանգաց և Անգլիոյ մէջ յարձակողական և պահպանողական դաշնագիր մը կը կնքուած է արդէն։ Ոմանք կը կարծեն թէ մի քանի օրէն ընդհանուր խռովութիւնն կ'սկսի Եւրոպայի մէջ։

Ճամբորդ շոգենաւեր Սանթիակո կողմերէն անցած ատեն թընդանօթի ձայներ լսած են։ Կը կարծուի թէ ճովային մեծ ճակատամարտը եղած է արդէն, բայց գաղտնի կը պահուի տակաւին։

Լոնտօն լուր գնացած է թէ Սէրվէրայի նաւատորմի շարքէն ամերիկեան հետ ճակատած ու բնաշինը եղած է երեքշաբթի օր։

Մանիլայի գերմանական հիւպատոսը անցեալ օր՝ կղզիի կառա-

վարչին հետ տեսնուելէ յետոյ՝ փորձած է գերմանական նաւէ մը պաշար առնել ցամաք՝ սպանիական բանակին համար։ Մովակալ Տուվի իհարկէ հակառակած է ասոր։ Բայց երբ հիւպատոսն սպանացած է գերման գրահանուելու հսկողութեան տակ պաշարն ցամաք հանել տալ, Տուվի յայտարարած է կրակել անմիջապէս գերման գրահանուելու վրայ՝ եթէ այս վերջինք յանձն առնեն Հնազանդիլ հիւպատոսի հրամանին։

Մանիլայի մէջ սովը սաստիկ է. միայն քաղց երկու տարի բարձրացեր է. գետնախնձորին փափուտը 50 սէնթի, և այն ալ հազուադուր է շատ։

Քի Ուէյթիէն հեռագիր մը կը կարծէ թէ Քիւպայ զօրք հանուած է արդէն, և թէ 48 ժամի մէջ սպանիական լուրերու առատութիւն մը պիտի հասնի հոս։

Նիւ Եորքի նահանգական կառավարաց բանակը, որ բանակած էր Քէյփ Պլաքի մէջ, անցեալ օր Միացեալ Նահանգաց կողմէ կարգեալ զօրավարի մը հրամանին յանձնուեցաւ։

Գաղղիական կառավարութիւնը Բանարես կղզիներն 6 միլիոն անգլիական սոկիի պիտի գնէ եղեր Սպանիայէ։

Երկու ամերիկեան գրահանուելու Սէրվէրայի նաւատորմի շարքէն հասնելն առաջ Սանթիակոյի հեռագրական թերթը կարած են։

Վիլիամ Քոլբերտի թագուհու ծննդեան տարեդարձին առթիւ թամբայի մէջ ճաշկերպութիւն արուեցաւ Երեքշաբթի օր, որուն ներկայ էին Միացեալ Նահանգաց զինուորական պաշտօնեայք ու օտար Տէրութեանց ներկայացուցիչք։ Ամերիկեան ու անգլիական ազգային եղանակներն նշանակեցան և բերդերէն թնդանօթներ արձակուեցան այս առթիւ։

Իտալիոյ մէջ խռովութիւնները դադարի սկսած են. պատերազմի առթիւ տիրող սղութեան պատճառաւ՝ անօթի եղած ըլլալու յանցանքով 1500 անձի շտափ մեռած են։

Օրէկօն գրահանուել, որ կը վախցուէր թէ Սպանիացուց ձեռքն պիտի լինար ձիւփիթը (Ճիօրիտա) հասաւ, ուսկէ մեկնելէ առաջ անուխ, պաշար և առատ ռազմամթերք պիտի ստանայ։

Վերջի լուրեր կըսեն թէ Լուպանիական նաւատորմի Սանթիակոյի նաւահանգստին մէջ բանտարկուած է այժմ։ Եթէ յանդգնի դուրս գալ՝ ամերիկեան նաւատորմիներն կամ անոնցմէ մին պիտի գտնէ իւր ստղն։

Սպանիական զօրավար մը գընդակի բռնուեցաւ՝ ճովակալ Տուվի վրայ կրակ չի կրնալ ընելուն համար։

Ամերիկայի կանայք Գաղղիոյ ցոյց տուած ոչ-բարեկամական ընթացքին համար որոշած են Ֆրանսական նորութիւններն և հազուստներն չի գործածել ասկէ վերջ։ Փարիզի վաճառականաց խորին ուշադրութիւ-

նը գրաւած է այս դէպք։

Ալաբամայի սահմաններն ճշգրտու պաշտօն ունեցող խառն յանձնարու մը, որ կազմուած էր Անգլիոյ և Միացեալ Նահանգաց կողմէ, իր առաջին նիստը ըրաւ այս շաբթու։ Եւրոպացիք մեծ հետաքրքրութեամբ կը հսկեն այս յանձնարարի վրայ, զի կը կարծուի թէ երկու Անգլո-Սաքսոն ազգերն դաշնակցութիւն մը կընքելու նախնական քայլերն պիտի առնեն այդ ժողովներու մէջ։

Նախագահ Մաք Քինլի 75,000 նոր կամուորներ կանչեց զէնքի տակ։

Մովակալ Քամարա խնամակալ թագուհու ծանոց թէ սպանիական ճովային զօրութիւնն կը բաղկանայ 8 պատերազմանաւէ և 7 օթանդակ նաւերէ։ Թէ այս լուրն ինչպէս հասաւ հոս հանելուկ մէ ինքնին։

Սպանիա խնդրեց Եւրոպական կառավարութիւններէ որ բողոքեն Քիւպայի պաշարման դէմ։

Քի Ուէյթի մէջ սպանութիւններ ու անկարգութիւններ յաճախ տեղի կունենան ռաւիականաց սակաւթիւ ըլլալուն համար։ Կառավարութիւնն զինուորական օրէնքի տակ պիտի գնէ քաղաքը։

Մ. ՆԱՀԱՆՔԻ ԵՒ ՏԱՃԻԿԸ

Պօլսէն կը հեռագրեն թէ Տաճիկ կառավարութիւնն Ամերիկացի քաղաքացիներու և Անգլիական հպատակներու անցագիր չի պիտի տայ ասկէ վերջ՝ թուրքոյ ներսերն ճամբորդելու համար։ Մ. Նահանգաց Կ. Պօլսոյ դեսպան Մր. Անճէլ բողոքած է այս որոշումին դէմ։

ԿԼԱՏԸՍԹՈՒՆԻ ՄԱՀՈՒՆ ԱՌԻՒԻ

Նիւ Եորքի Հայոց կողմէն հեռուեալ հեռագիրը զրկուեցաւ Տիկին Կլատըսթոնի։

Նիւ Եորք, Մայիս 20, 98 Տիկին Ո. Կլատըսթոն

Հավարտէն, Անգլիա Նիւ Եորքի Հայերը ձեռքի հետ կ'ողորան։ Հայոց կորուստը անդամանելի է տառապող մարդկութեան մեծ բարեկամին մահուամբ։

ԹԱՎՇԱՆՆԱՆ, ՀԱՅԿՈՒՆԻ ԵՒ ՅԱՆՆԱՆՈՒՄԲ

Վաղը Ս. Ոսկերեան Եկեղեցուց մէջ Ազգային Հոգաբարձութեան կարգադրութեամբ՝ Հոգեհանգիտի պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ Հայոց մեծ բարեկամին, Ուիլիամ Կլատըսթոնի։ Այս առթիւ դանբանական քարոզներ պիտի խօսին Արթ. Ուաղ Վարդապետ, Պատ. Հայկունի և Տ. Կ. Մ. Քիրէշեան։ Արարողութիւնը պիտի սկսին կէսօրէ վերջ ժամը ճիշդ մէկին։

Անցեալ Կիրակի երեկոյ ազատ լսարանի մէջ քաղաքի Հայ գաղթականութիւնն որոշեց, և յանուն Մասաչուսէթսի և Չիքսիոյ Հայոց 50 բառով մի ցաւակցական հեռա-

գիր յղեց Տիկին Կլատըսթոնի ի Հավարտէն։ Այս ժողովոյ մէջ ուսումնական խորհրդի մասնաւոր հրահրանօք խօսեցաւ նախ Տ. Չիքսիոյ, որ պատմեց Հանգուցելոյ կեանքն ու գործունէութիւնը. և երբ այդ առթիւ փորձեց քանի մը խօսք ալ ըսել ազգային յեղափոխութեանց մասին, ատենապետն կտոր մը թուղթ սահեցնելով անոր ձեռաց մէջ, արգիլեց զինքն՝ ակնարկ մ'իսկ նետել այդ հին խնդիրներու վրայ։ Տ. Չիքսիոյ վերջ ատենապետն ջանաց արդարացնել իւր ապօրինի ընթացքը՝ ըսելով թէ 100 է աւելի անձինք պիտի մեկնէին սրահէն եթէ թոյլ տար ատենախօսին շարունակել այդ խօսքերն։ Ամէն կողմէ ժողովուրդը բողոքեց ատենապետի այդ ընթացքին դէմ, որ հակառակ էր ոչ միայն օրինաց, այլ Լատրանի նպատակին ու կանոնագրութեան։ Բայց որպէս զի այդ սրբոյ հանդէսն կռուի և խռովութեանց դաշտ մը չի դառնար, խնդիրն փակուեցաւ շուտով։ Երկրորդ ատենախօսն էր Կատ. Մարգարէտեան, որ քիչ մը առաջ տեղի ունեցող միջադէպին վրայ խօսելով՝ քանի մը սուր ակնարկութիւններ ըրաւ ու խրատականներով վերջացուց իր խօսքը։ Վերջի ատենախօսն էր Մաշթոց վարդապետ, որ բացատրեց ժողովի բուն նպատակը. ծանոց թէ Չիքսիոյն, Պօլսոնէն, Լինէն, Ֆիշպըրկէն, Լօվէլէն և Լօրէնէն հեռագիր ու հեռաձայնով հրահանգ ստացած էր՝ յանուն այդ քաղաքաց Հայ գաղթականութեանց՝ ցաւակցական հեռագիր յղել Կլատըսթոնի ընտանեաց. եւ թելադրեց որ Ռաթըրի Հայ գաղութըն ալ իր հաւանութիւնն տայ, ազգային այս պարտականութիւնն կատարելու համար։ Սակայն կը ցաւիմ տեղեկագրել թէ այս մասին մի քանի հակառակողներ եղան ժողովին մէջ։ Ասոնց գլխաւոր փաստն սա էր թէ համակրական հեռագիր մը Տաճիկ կառավարութեան ցատուան կրնար շարժել ու նոր կոտորածի մը տեղի տալ։ Ոմանք կը կարծէին թէ Պատրիարքի պարտականութիւնն էր ազգի ցաւակցութիւնն յայտնել այս մասին. ուրիշներ հանգուցեալն մեր դժբաղդութեան պատճառն կը նկատէին և անարժան մեր ցաւակցութեանց։ Հայկական կռիւ մը անխուսափելի կը թուէր, բայց բարեբաղդաբար ժողովուրդը խելացի վարուեցաւ, ու քուէի դրուելով ստուար մեծամասնութեամբ ընդունուեցաւ վերջապէս։

Գուէարկութեան վերջ ծանր խօսքեր ըրին ոմանք Տ. Մաշթոց վարդապետին, և ըսին թէ Ն. Արժանապատուութիւնը իւր այս ընթացքով ժողովուրդին տունը կը փլցունէր։

Ցաւակցական հեռագիր մը տալու գաղափարին դէմ մաքառողներէ մին էր «Եփրատի» արժանապարգ Ումբաքերը, որ կը կարծէր թէ այդ ընթացքով Տաճիկ կառավարութեան և Սուլթանի բարեկութիւնն պիտի գըրգըռէր Հայ ժողովրդի դէմ։ Ուսթըր, Մայիս 23 ՀԱՅԿԱՅԹՈՒՄ

Հին Ուրբ Գործեր

Հայաստանի բարենորոգման համարաբար ծրագրերը ընդունելու հարցը մեզին էր որ թիֆլիզցիները համարյա իրենց վրա թողնելու համար կողմնակի մայրաքաղաքին մեջ ամեն փամ կը սպասուէր Սուլթանի կողմէն ծրագրերն ստորագրուելու լուրին: Յոյսի և անյուսուսթեան օրեր էին 95ի ամառուան այդ օրերը:

Արարատեան դաշտի և Տիֆլիսեանի լեռներու երկար ճամբորդութեան միջոցին լրագրի մը երես տեսած էին՝ վերջին լուրը իմանալու համար: Երևան հասնելու պէս պանդոկի մը մէջ խումբ մը կովկասցի երիտասարդներ կը գտնեմ, որոնք վճիթայի տակառի մը շուրջը խմելու «կեցցե՛ք ծրագրերը, կեցցե՛ք Հայաստան» պատրով, գաւաթներն իրարու ետեւէ կը պարպեն— «Ո՛ր մի՛ր, աղբեր ճան, ըսաւ ինձ Հայ զինուոր մը, ընդունուել է ծրագրերը— վճիթայի գաւաթէն վերջը ճամբորդութեան համար մը կուտայ ինձ, որուն մէջ իրօք Լօնտօնեան հեռագիր մը կ'աւետէր ծրագրերն ընդունուիլը:

Շատ մօտ պարզուող Արարատի վեհապետն տեսարանը դիւրեմ է գիտ: Այս կ'ընայ երևան սպասել: Հազարապատի վանքին հիւրընկալ Հայր սուրբին սենեակն եմ երեք փամ վերջը:

—Կը ներքէ Հայր սուրբ, թէյէն առաջ վերջին Մշակները կուտա՞ք:

—Մշակ, այստեղ Մշակի իրմբագրատանը կարծում ես դու գրեցրացի «Իրանից», ո՛չ ոք այստեղ Մշակ է ստանում: դո՛ւ ալ «Իրանից» ես: «Նոր Դար» կայ, չե՞ս ուզում:

«Ուզում էի», սրուկեակ իմ գործի՛ւ պէս ժամուն՝ ան ալ կ'ուզար: Բայց հանելուկ մնացին ինձ այդ փերտի տիպ կրող—արդէն Չընքուչցի էր— կոշտ վեղարաւորի խօսքերը: Վերջէն հասկնամ որ Մշակը Մեղրակեան Սրբազանին մինակ կուգար քմրոջ վանքին մէջ: Արծրունիի թերթի մուտքը ո՛չ պատճառաւոր արգելուած էր Հազարապատի պարիսպներէն ներս, բայց պաշտօնական անաթէմ մը կարգացուած էր կաթիլովէն մէջ՝ կովկասի ազատ թերթին դէմ:

Տգէտ, սե գլուխ և սե սիրտ կը զերկանուէր ինձ կ'ատէր ազատօրէն և խստօրէն քննադատող թերթ մը: Շատ դարմանալի չէ:

Ռօպերթ Գօլշտեյնի 91-92ի ուսանողները յիշելու են իրենց մէկ ընկերը, Ղալաթիոյ Հայ պանթէօնի մը որդին, որ ամենուս ծանօթ էր Նարուզոդոնոսը անուով:

Կէսօրուայ դադարի մը միջոցին, Հիսարի բլրակադաշտին վրայ կը շքրջագայէինք Նարուզոդոնոսորին հետ: «Հայրենիքի» թիւերէն մին կ'սկսիմ կարդալ, ուշադրութիւն չընելով հետոս պատողին արեղ-ցրեղ զրոյցներուն:

—Գնա՛, պէ, դու ալ, վերս վերս այդ լրագրի կը կարդաս, ըսաւ մեր Նարուզոդոնոսը արքայիկը: անցեալ իրիկուն մեր միտի փութին այ (իւր եղբայրը) Հատ մը տուն բերած էր, բայց մայրս անանկ մը շատնց զինքը որ ալ մէյ մըն ալ կըրնայ նէ թող տունը մացնէ աս լրագրերը: Հէյն մ'անցեալ օր տեսա՛ր ինչ գրած էր: ... Ինչպէ՛ս մարդուն միս մինակ անուը գրած անցած է՝ քօմիփի ման չը գիտէր քի՛...:

Մինչև այն օրը ես այս մեծատունի որդին իւր ժողովրդական ա-

նունով կանչած չէի, այն օրէն ես ալ սկսայ ընկերներուս հետեիլ:

Կ. Գօլսոյ «Հայ Հայֆի» ազնուաշքուհի տիկին մը կ'ատէ Կ. Գօլսոյ ազատ լրագրի: Այս ալ տարօրինակ չէ:

Ն. Ե. Զ. Ե. Թանգարանի Խնամակալները չէինք գիտէր թէ Ծէյքափերի հարազատ աշակերտներն են: Խնամակալութիւնը օր մը անխորհրդարար Գրադարանի գրքերը Ս. Բարթոլոմէոսի թեմարանը փոխադրեց, և շատ շուտով գլղաց: Անցեալները ճաշարանի մը մէջ, նարտախաղի և թղթխաղի աղմուկին մէջ տարաւ գրքերը, իբրև թէ «ընթերցարան» մը հաստատեց, բայց մի շարժվելը նորէն գլղաց: Անցեալ Շարաֆ գիշեր ընդհանուր ժողովին մէջ Միտիեան վերջին ընդհանուր ժողովի արձանագրութիւնը վաւերացուեցաւ, 5 րոպէ վերջ խնամակալութիւնը գլղաց ու համոզեց անդամներն, որք ետ առին քիչ մ'անալ տրուած քուէները: Խնամակալութիւնը իւր ժողովին մէջ պարսաւանաց քուէ մը անցուցած էր Տիգրիս թերթին դէմ, որովհետև «ազատ թերթը» քննադատած էր իւր ընթացքը, ու «ընդհանուր ժողովին» մէջ (որ քանի մը հոգի միայն ներկայ էին) ընդունեցնել տուաւ այս անաթէման թերթին դէմ:

Ի՛նչ կ'ըլլայ որ, Խնամակալութիւնը նորէն կը գլղայ. չէ՞ մի որ Ծէյքափեր գրած է թէ «անխորհուրդ գործեր կ'ընենք որպէս զի պարագայ ժամերուս գլղալու հոճոյքը վայելենք»: Բայց Թանգարանի ընկերութեան մը անաթէման ազատ թերթի մը դէմ, աւելի խոր տգիտութեան նշան է, քան կղերին, և մեծատուն տիկնոջը...:

Մայիս 16, Նիւ Եորք Թ. Զ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Յրէջնօ 14 Մայիս Որբերու խնդրոյն համար գրած յօդուածս՝ Թիւրիմացութեան մը տեղի առած ըլլալով կը փութամ ճշգրտել:

Նոյն յօդուածէս վերադարձած են մեր Բողոքական ազգայինը, որովհետև չէի որոշած ու ճշգրտած նոյն ազգայիններէն մի քանիներու մասնակցութիւնն՝ որբերու հանգանակութեան: արդ կը փութամ յայտարարել թէ՛ տեղս գտնուող 300է աւելի բողոքականաց մէջէն 9 անձինք մասնակցած են նոյն հանգանակութեան, 20 բաժին գրուելով, որոց անունները արդէն հրատարակուած էր ցանկին մէջ:

Թիւրիմացութիւնը բողոքողին բառնալու համար, հարկ կը համարիմ ըսել նաև թէ՛ ուրիշ առթիւ ելլած հանգանակութեանց մասնակցող Բողոքական ազգայիններէն կարևոր մաս մը, այս անգամ չի պատասխանեցին որբերու հրաւերին, որով իրաւամբ առիթ տուին մեզ կարծելու թէ՛ Լուսաւորչականի խնդրի նկատուեցաւ, և կամ ինչպէ՛ս ըսած էի, յատուկ դիտում մը կ'ար գտնուեց հեռի պահելու այդ նուիրական պարտականութենէն: Ինչ որ ալ ըլլայ իրողութիւնն աւելի պիտա՛սօս է, և արդարապէս անձինք գմեղ չի պիտի մեղադրեն, եթէ ստուգու ըսած ալ ըլլայինք թէ՛ «բողոքական ազգային» չը մասնակցեցան որբերու հանգանակութեան):

Կը խնդրեմ նաև որ ուղղէք այն սխալ թէ նուիրատուութեանց § 20ի գումարն ամբողջովին Օննիկ Եանգեանի ձեռամբ հաւաքուած չէր, այլ յիշեալ պատանին § 16 միայն հաւա-

քած էր, ու մնացեալ § 4ը նուիրած էին՝ § 1 Ս. Մովսէսեան, § 1 Տիկին Եանգեան, § 1 Ե. Մեղրեան, և 50 սէնթ ոսն:

Վերջին ատեններս տեղուոյ Հայ իգական սեռն «կարի ընկերութիւն» անունով միութիւն մը հաստատեց, որոյ նպատակն է այս տեղ գտնուող կարոտ կիներուն կամ անձանց փառանքով կամ ձրի կար կարել, ու ատկէ գոյացած դրամով աւելի կարոտներուն զգեստ ու ճերմակեղէն հայթայթել: Մենք որչափ որ գիտեմք՝ այս տեղ գտնուող ազգայնոց մէջ գրեթէ չկան այդ աստիճանի կարոտ ու իրենց կարերը կարելու անկարող ընտանիքներ, մինչդեռ անոնցմէ շատ ու շատ աւելի կարոտ որբեր ու որբուհիներ ՚երկ, անթի կը ստանալին Հայաստանի մէջ: արդեօք աւելի մեծ ու լաւագոյն գործ մը չը՞ պիտի համարուէր եթէ այդ ազնիւ Տիկիններն իրենց հոգն ու ուշադրութիւնը անոնց վրայ դարձունէին:

Այս առթիւ կը պարտաւորիմք յիշել նաև որ միեւնոյն տիկիններն իր 4-5 տարի առաջ (Սասնոյ կոտորածի ատեն) ուրիշ մի ընկերութիւն հաստատած էին ու մինչև ցայժմ՝ 100 տղարի գումար մը հաւաքած՝ Հայաստանի թշուառներուն շրկելու նպատակով. այժմ կը լսենք թէ՛ ումանք կ'աշխատին որ այդ դրամը յատկանայ Բողոքական ազգայնոց ապագային շինելու առօրտեղոյն շինութեան: Չեմք յուսար թէ Տիկինները հաւանին իրենց որոշած նպատակէն տարբեր բանի մը ծառայեցնել զայն՝ մանաւանդ այժմ, որ այնչափ մեծ կարօտութիւն կայ ի Հայաստան. և կը հաւատամք թէ՛ պիտի փութան շրկել որբերուն կամ սովեալ թըլուսաններուն:

Կ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՊՐՈՒԲԼԻՆԻ ՆԱԽԱՐԱՆԸ

Նէյվի Եարտ,

Պրուբլին, Մայիս 18.

Նէյվի Եարտ, Պրուբլինի կամուրջէն տասը րոպէի չափ հեռաւորութիւն ունի, և հաստատուած է Իսթ Բիվերի ափանց վրայ՝ 50 էյքրէ աւելի տարածութեամբ. յիսուսի չափ շէնքեր կան Եարտին մէջ, որոց մեծ մասը առանձին գործարաններ են՝ նաև շինելու կամ նորոգելու յատուկ: Իսկ մնացեալներն ծովային պաշտօնեայններու բնակարաններն են: Ամենէ աւելի հետաքրքրութիւն պատճառողը Հոս վէրմանթ անուն նաւն է, որ դար մ'առաջ ամերիկացուոց ամենէ նշանաւոր պատերազմանաւն էր, իսկ այժմ կը գործածուի իր «Րեպլիկ Շիֆ», ուր նաւազներ ու նորեկներ կ'ընդունուին, և մարզանք կ'ուսանին:

Այս նաւարանն Միացեալ Նահանգաց ամենէ նշանաւոր Նէյվի Եարտն է, և հետեւաբար ուրիշ քաղաքներէ առնուած ծովային զօրքերն նախ Հոս կը բերուին, և ասկէ կը զրկուին ուր որ հարկ է: Հոս այժմ կան բաւական զօրքեր, որք հրամանի կ'սպասեն՝ մեկնելու համար, և ամեն օր նորեր կուգան ու հիններ կը մեկնին շարունակ: Մովային զօրաց ապրուստը շատ աղէկ է Հոս. կառավարութիւնը մեծ հոգ կը տանի անոնց ապրուստին, բնակութեան և համազգեստի մասին: Աւելորդ է կարգ կանոնի վրայ խօսիլ. ամեն բան օրէնքի տակ է անշուշտ: Օրինակի համար. երեկոյները ամեն մարդ փամը 9 ին անկողին ըլլալու է. առտու 5 ին անկողինէն ելնելու ու 6 1/2ին նախաճաշ առնելու է. ևն:

Այժմ ծառայութեան համար կը ուզուին Հոս բժիշկներ, գեղագոր-

ծեր, հիւանդապահներ, խոհարարներ, մեքենագործներ, ատղձագործներ, զինագործներ, նաւազներ, զինուոր, գրագիրներ ևն: Ասոնց ամսականներն 15 է մինչև 75 տղար է՝ իրենց արհեստի ու պաշտօնի համեմտո: Բժիշկներու տարեկան թոշակը 1500 տղար է կ'սկսի և կը բարձրանայ մինչև 2,500 տղար: Ասոնք, ինչպէս նաև գեղագործներն մասնաւոր քննութիւն մը կ'անցունեն ընդունուելէ առաջ: Արհեստաւորներն ալ քննութեան կ'ենթարկուին իրենց ճիւղի մէջ: Թիկնածուներու հասակը, տարիքը և առողջութիւնը նկատողութեան կ'առնուին՝ մասնաւոր օրինաց համաձայն:

Նաւարանը բաց է այժմ այցելուաց առջև կիրակի օրեր միայն՝ առաւօտեան փամը 9էն մինչև երեկոյեան 4ը:

Պատերազմը շատ քիչ զօրացուցաւ. ամենն ալ ուրախ դուարթ հրամանի կ'սպասեն մեկնելու համար: Գուցէ այս բազմութեան մէջ ես եմ ամենէ աւելի վախցողն, որ անհամար կ'սպասեմ երթալու հրամանին:

Մ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Դեղագործ Մ. Ն. Ծովային

Զօրարանակին

ՄԵՍ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Մայիս 16, Փրովիտէնս

Փրովիտէնսի Հայ նուագաձուկաց խումբը, ամսոյս 28ն, Շարաֆ երկոյ փամը 8ին, մեծ նուագահանդէս մը պիտի տայ յուսթըր, Եինկմէններու հօլին մէջ, ուր պիտի նուագեն հայկական, անգլիական, իտալական և տաճկական ընտիր երգեր և քայլերգեր: Կ'արժէ որ Ուսթըրի Հայ ազգայինք երթան սոյն հանդէսին՝ տանելով իրենց հետ ամերիկացի բարեկամներ, որով թէ՛ քաջաբերած կը ըլլան այս նորարողութիւնը իսումը և թէ՛ համոզուած կ'ըլլան որ Ասիոյ խորէն հազիւ հազ իւր կեանքը գազանի ճիրաններէն ազատող Հայն ունի իւր մէջ երաժշտութեան ոգին և ճաշակը, և կրնայ նուագել այնչափ լաւ որչափ կրնան Եւրոպացի նուագիչներ:

Սոյն հանդիսին մէջ պիտի երգեն նաև Տ. Յ Մարկաւագեան, որ հոգ և ջանք խնայած չէ խմբին յառաջաման ու զարգացման համար: Օրինորդ Ազնիւ Բարակեան սիրայօժար յանձն առած է երգել:

ԲՈՒՌՎԱՌ

ԲԼՈՏԱՏՅՔԻ ԱՐԿԱՄԸ

Մեր Նէյուէի թղթակիցն՝ անցեալ թուով հրատարակուած Մերիտընի թղթակցութեան մասին գրելով՝ կ'րտէ թէ Բրէյթեր լծի վրայ տեղի ունեցող արկածին եօթը արեւելքցի զոհերը Նէյուէէն մեկնող մեր հայրենակիցներն չէին կրնար եղած ըլլալ. որովհետև այս խմբին Ապրիլ 7 թուականաւ քարտ մը ստացուած է տեղեկացնող թէ ասոնք չորս օրէն պիտի կրնան բուն սովի հանքերը հասնիլ. հետեւաբար Հայերը Ապրիլ 10ին այդ լծէն անցած ըլլալու են, մինչդեռ աղէտ պատահած է Մայիս 2ին:

- Չինկ՝... զինկ՝
- Ո՞վ է:
- Հայր սուրբը Հոս է:
- Չէ, թատրոն գնաց: Ի՛նչ կայ:
- Երբ կուգայ նէ՛ խնդրեմ ըսէ իրեն քի շուտ մը Չայի Մայքըլին տունը գայ մեր Հարիին հաղորդութիւն տալու համար: Խեղճ տղան հոգեւար է:
- Ըմ... ՍՈՒԻՆ

